ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի հուլիսի 20-ի թիվ 360-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ «ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 5-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 20-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի մարտի 26-ի N 384-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 21-րդ և 22-րդ կետերը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի տարածքում «Բուսաբուծության աջակցության 2026 թվականի» ծրագրի շրջանակներում մոնիթորինգի իրականացման հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահին՝

2.1 2026 թվականի ընթաքում մինչև բերքահավաքը իրականացնել ընտրանքային մոնիթորինգ ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ՝ մոնիթորինգի ընդգրկելիության նվազագույն շեմ սահմանելով համայնքի շահառուների թվի առնվազն 20 %-ը:

2.2 2026 թվականի մոնիթորինգից հետո առավելագույնը 1 ամսվա ընթացքում ամփոփել իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ծրագրի 20-րդ կետով նախատեսված ձևաչափով ներկայացնել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Պարտականությունները կատարող՝

Recoverable Signature

Signed by: HOVHANNISYAN MILADA 6914980608

X

Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026թ. հուլիս ք. Աշտարակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2026 թվականի հուլիսի 17-ի թիվ 357-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՈՍԿԵՎԱԶԻ Ե. ԴԱՆԻԵԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 159-րդ, 163-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1302-Ն որոշման 3-րդ հավելվածի 61-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 20-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Հովհաննիսյանի 2026 թվականի հուլիսի 17-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նաիրա Հովհաննիսյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդի մասը 2025-2026 թվականների ուսումնական տարվա համար 15 աշխատանքային օր տևողությամբ՝ 2026 թվականի հուլիսի 27-ից օգոստոսի 14-ը ներառյալ:

2.Նաիրա Հովհաննիսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել «Ոսկեվազի Ե. Դանիելյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կրթական աշակցությունների և դաստիարակչական աշխատանքների հանձնակարգող Ռուզաննա Վարդանյանին:

3. Նաիրա Հովհաննիսյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի օգոստոսի 17-ից:

Պարտականությունները կատարող՝

Recoverable Signature

Ստորագրող
ՄԻԼԱԴԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
6914980608

X

Signed by: HOVHANNISYAN MILADA 6914980608 Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2026թ. հուլիսի ք. Աշտարակ